DOI: 10.54503/2953-805X-2025.7-183

Սալվինե Մարկոսյան
ՀԱԻ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԴԵՐԸ ՊՈԼՍԱՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ

19-րդ դ. առաջին տասնամյակում Կ.Պոլսում պարբերական մամուլի առաջընթացը պայմանավորված էր մի շարք գործոններով: 1830–1850-ական թթ. Օսմանյան կայսրության քաղաքական ու տնտեսական ճգնաժամի պայմաններում ձևավորվեց օսմանյան բարենորոգչական գաղափարախոսությունը (*թանզիմաթ*)[1]: *Թանզիմաթ*ի բարեփոխումները թեև հիմնականում քիչ արդյունավետ էին, այնուամենայնիվ արագացնում էին Օսմանյան Թուրքիայում կատարվող տարաբնույթ հանրային ու տնտեսական փոփոխությունները: Դա խթանեց ոչ-մուսուլման ժողովուրդների ազգային զարգացումը, որ կապված էր նաև Թուրքիայում սկիզբ առած կրթական և մշակութային նոր շարժման հետ: Այս առումով՝ մամուլի ձևավորումն իրավամբ առանցքային տեղ ունի հայոց մշակութային ինքնության պահպանման հարցում[2]:

Հանրային կյանքի աշխուժացմամբ պայմանավորված՝ 1840-ականներին առաջ եկավ ազգային պաշտոնաթերթ ունենալու հարցը: 1846 թ. հուլիսին հիմնվեց «Հայաստան» շաբաթաթերթը (1846–1852 թթ.): «Հայաստան»-ը լույս էր տեսնում մեծագիր, երկթերթ, բաժանորդագրության տարեկան գինն էր՝ 1000 *ղուռուչ*[3]: Շաբաթաթերթն իր տպագրությամբ պարտական էր ժամանակի հրատարակչական գործի մասնագետ, ոսկերիչ, փորագրող, հայ նոր տպատառերի ստեղծող Հովհաննես Մյուհենտիյանին: Վերջինս մեծ վաստակ ունի նաև թուրք տպագրության զարգացման գործում, ինչի համար անվանվել է «Օսմանյան Գուտենբերգ» և արժանացել կառավարական պարգևների[4]:

«Հայաստան»-ն ունեցել է երկու խմբագիր՝ Մկրտիչ Աղաթոնը (1848–1850 թթ.) և Յովհաննէս Չամուրճեանը (1846–1848 թթ. և 1850–1852 թթ.), որոնց հանրային-քաղաքական հայացքները որոշիչ ազդեցություն ունեցան թերթի հիմնական ուղղվածության և բովանդակության վրա: Մ. Աղաթոնն առավել ազատական հայացքներով էր աչքի ընկնում, որով և հակադրվում էր Յ. Չամուրճեանին: Վերջինս պահպանողական հայացքներ ուներ, կողմ էր Թուրքիայում տիրող սոցիալ-քաղաքական իրավիճակի պահպանմանը: Այս գաղափարական հակասությունն իր արտահայտությունն է գտել նրա խմբագրության տարիներին լույս տեսած համարներում[5]:

---

1 Թանզիմաթը ժամանակագրորեն ընդգրկում է երկու փուլ՝ 1839–1856 և 1856–1876 թթ., երբ հռչակվեց Օսմանյան առաջին սահմանադրությունը (1876 թ.): 1839 թ. Թուրքիայի սահմանադրական փոփոխությունների կետերից մեկը կրթական կյանքի զարգացումն էր, հանրային կրթության ոլորտում բարեփոխումները. այս մասին առավել մանրամասն տե՛ս Davison 1963, 494:

2 Կ.Պոլսում 1832 թ. սկսեց լույս տեսնել «Լրոյ Գիր» կամ «Լրոյ Գիր Մեծի Տէրութեանն Օսմանեան» թերթը (1832–1850 թթ.), որով և սկզբնավորվեց արևմտահայ մամուլը: Թերթը նախ հանդես էր գալիս որպես Կ.Պոլսում 1831 թ. հիմնված թուրքերեն առաջին թերթի՝ «Թազվիմի վագայի» («Դեպքերի օրացույց») թարգմանված տարբերակ, ապա՝ որպես ինքնուրույն պարբերական:

3 Ղուկասյան 1975, 160–163; Խառատյան և այլք (խմբ.) 2006, 126–138:

4 Ս. Փրկիչ ազգային հիվանդանոց, 2015, № 17 (սեպտեմբեր-հոկտեմբեր):

5 Հովսեփյան 2014, 9–11:

«Հայաստան»-ում արծարծվում էին զանազան ոլորտների վերաբերող հարցեր, որոնք առանձնանում էին թեմատիկ բաժիններով ու խորագրերով՝ «Ազգային», «Քաղաքական», «Բանասիրական», «Արտաքին» ևն: Սույն հրապարակման մեջ ընտրել ենք «Ազգային» խորագրի ներքո տպված հոդվածները. ուսումնասիրել ենք մեզ հասանելի որոշ համարներ:

Օսմանյան Թուրքիայում ազգային ինքնության խնդրին անդրադառնալիս՝ թերթը շեշտում է, որ քայլեր էին ձեռնարկվում դպրոցից արմատախիլ անելու ազգային ինքնության դրսևորման փորձերը. *«Հարկաւոր եղած ուսմունքները եւր ձգելով, հարկաւոր չեղածը կը սկսին առաջ տանելու ջանք ընել, կամ առաջ որը սորվիլ հարկաւոր է նէ, այն ձգել ուրիշ բան սորվիլ: Օրինակի համար, դպրոց կայ որ պատմութիւն դաս չի տար որ պինդ հարկաւոր է աշակերտաց, անոր տեղը գաղղիերէն՝ անգղիերէն դաս կուտայ երկոքը մէկ տեղ, որ այս երկու լեզուին առաջինը պատմութեան դասը խափանելու չափ հարկաւոր չէ, երկրորդը մեր ազգին բնաւ հարկաւոր չէ առ այժմ»*[6]:

Այս համատեքստում թերթը ներկայացնում և քննարկում է մի շարք կրթական հարցեր և խնդիրներ, որոնք բացահայտում են այն մարտահրավերները, որոնց պատճառով շատ դեպքերում թերանում էր կրթական գործընթացը: Կարևորելով կրթական գործընթացի առավել համակարգված բնույթը՝ թերթը նշում է. *«Նախ և առաջ ուսման կարգ մը հաստատեն որ ամէն դպրոց այն կարգովը երթալու պարտաւորուի, և կը պարտաւորին ամէն դասատու որ առանց այն խորհրդին վկայականին դասատուութիւն չընեն և ընկերութիւններն ալ օրինաւոր դասատու չեն ընդունիր վկայական չունեցող մարդը»*[7]:

Հարկ է նշել, որ Յ. Զամուրճեանը՝ որպես առաջին խմբագիր, չարաշահում էր իր իրավունքները, և այս պարագայում՝ քաղաքական հակոտնյա ուղղություններ դավանող խմբագիրները չէին կարող երկար ժամանակ կողք-կողքի հրատարակել մի թերթ՝ տալով միաժամանակ և՛ պահպանողական, և՛ ազատական դիմագիծ: 1848 թ. Յ. Զամուրճեանը հեռացավ խմբագրությունից, իսկ 1852 թ. ընդմիշտ թողեց պաշտոնաթերթը: Յ. Զամուրճեանը հետագայում գործունեություն ծավալեց նախ իր հայատառ թուրքերեն «Զօհալ» (1855 թ.), ապա՝ այդ թերթի անունը և լեզուն հայերենի փոխած «Երևակ» (1857–1866 թթ.) թերթում[8]:

1848 թ. վերջին՝ երկրորդ խմբագիր Մկրտիչ Աղաթոնը թերթին աշխատակցելու է հրավիրում Եւրոպայում կրթություն ստացած գաղափարախոսների, ինչպիսիք էին՝ Գրիգոր Աղաթոնը, Հակոբ Կրճիկյանը, Սերովբե Վիչենյանը, Հակոբ Մելիքյանը, Մկրտիչ Սոմճյանը, Գևորգ Սթիմարաճյանը, Միքայել Աղաթոնը, Պողոս Նիկողոսյանը և այլք[9]: Այս գործիչները թերթին կարողացան հաղորդել նոր շունչ և դիմագիծ՝ օգնելով ժողովրդավարական գաղափարախոսության ձևավորմանն ու տարածմանը: Նրանք առաջ քաշեցին համընդհանուր գրագիտության անհրաժեշտության, եւրոպական լուսավորական գաղափարների յուրացման և այլ խնդիրներ:

Օսմանյան Թուրքիան փոքրամասնությունների հանդեպ վարում էր խտրական քաղաքականություն, որի նպատակը վերջնական ձուլումն էր: Այդ քաղաքականության արդյունքում անհատը կամ խումբը ձեռք էին բերում գերիշխող խմբի բնութագրեր և ի վերջո՝

---

6 Զամուրճեան Յ., Աղաթոն Մ., Ազգային // «Հայաստան» 1847, դեկտեմբերի 20, № 25–78, 3:

7 Զամուրճեան Յ., Աղաթոն Մ., Ազգային // «Հայաստան» 1847, դեկտեմբերի 20, № 25–78, 4:

8 Ղուկասյան 1975, 151–152, 160–257; Խառատյան և այլք (խմբ.) 2006, 128; Հովսեփյան 2014, 10: Հայատառ թուրքերեն թերթ հրապարակելու պատճառը խմբագիրը տեսնում էր հետևյալ խնդրի մեջ. «...տաճկերէն գրելով հայերէն եւ տաճկերէն հասկցողներուն մէկէն օգուտ կըլլայ. իսկ հայերէն գրելով միայն հայերէն գիտցողները կը հասկընան. Եւ մենք օգտին առաւելութեանը նայելով տաճկերէն սկսեցինք. և մտքերնիս այնպէս շարունակել էր» [Զամուրճեան Յ., Երևակ 1857, №1, 3]:

9 Խառատյան և այլք (խմբ.) 2006, 133:

ընդունվում որպես դրա մի մաս[10]:

Վերոնշյալ գաղափարախոսներն իրենց հոդվածներով փորձում էին հակադրվել պահպանողական հոսանքի ներկայացուցիչներին, որոնք կողմ էին Օսմանյան Թուրքիայի սոցիալ-քաղաքական իրավիճակի պահպանմանը: Նրանք գտնում էին, որ ազգային կյանքի առաջադիմության անհրաժեշտ պայմանը՝ ազգը լուսավորելն ու կրթելն է: Ըստ նրանց՝ ընդհանուր բարեկեցության կարելի է հասնել միայն կրթվելով և իբրև ազգ միասնական դառնալով, որպեսզի հնարավոր լինի խուսափել ձուլման վտանգից[11]:

Կարևորելով դպրոցաշինության գործը՝ թերթը հետաքրքրական փաստեր է ներկայացնում Տատյան ամիրայական տոհմի կատարած գործունեության մասին՝ հատկապես ազգային առաջադիմության զարգացման գործում. *«Տատեան Յովհաննէս ամիրան Վէնայի Մխիթարեան միաբանութեան վանքը այցելութեան երթալուն՝ այն տեղի աշխատասէր վերապատուելի Հայոց յանձներ է որ նախ՝ մէկ ընդհանուր պատմութիւն մը շինեն ի սկզբանէ աշխարհի մինչև մեր օրը գալով, երկրորդ՝ արդէն շինած երկրագունդ և երկրագունդներուն խիստ մեծագոյնները շինեն որոնց երկոքն ալ արդարև ազգիս համար շատ կարևոր բաներ են: Ինչպէս կարևոր էին հայերէն աշխարհացոյցները, որ անոնք ալ այն ազգասէր ամիրային յանձնարարութեամբը շինուեցան Վենէտիկի Մխիթարեան վերապատուելի Հարց աշխատութիւնը»*[12]:

Մ. Աղաթոնի խմբագրության շրջանում (1848–1850 թթ.) «Հայաստան»-ն այս կամ այն չափով պատկերացում էր տալիս արևմտահայ իրականության, ազգային խնդիրների, կրթական-մշակութային կյանքի մասին:

Ազգային խնդիրներից զատ՝ թերթը ներկայացրել է նաև Օսմանյան Թուրքիայի, եւրոպական տերությունների քաղաքական ու հանրային անցուդարձերի, մշակույթի ու գիտության զարգացման վերաբերյալ հարցերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԽԱՌԱՏՅԱՆ և այլք (խմբ.) 2006
Խառատյան Ա.Ա., Գևորգյան Լ.Մ., Մխիթարյան Մ.Հ. (խմբ.), Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII–XIX դարեր, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Գահիրե, 2006, 702 էջ:

ՀՈՎՍԵՓՅԱՆ 2014
Հովսեփյան Մ.Հ., Արևմտահայ մամուլի պատմություն (1832–1915 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 2014, 90 էջ:

ՂՈՒԿԱՍՅԱՆ 1975
Ղուկասյան Վ.Գ., Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 338 էջ:

DAVISON 1963
Davison R.H., Reform in the Ottoman Empire 1856–1876, Princeton, Princeton University Press, 1963, 479 p.

SUBERVI-VELEZ 1986
Subervi-Velez F.A., The Mass Media and Ethnic Assimilation and Pluralism: A Review Research Proposal with Special Focus on Hispanics // Communication Research, 1986, Vol. 13/1, 71–96.

10 Subervi-Velez 1986, 71.

11 Հովսեփյան 2014, 10:

12 Չամուրճեան Յ., Աղաթոն Մ., Ազգային // «Հայաստան» 1848, հունվարի 9, № 28–81, 3:

Salvine H. Markosyan

Institute of Archaeology and Ethnography, NAS of RA

THE ROLE OF WEEKLY NEWSLETTER "HAYASTAN" IN THE CULTURAL LIFE OF ARMENIANS IN CONSTANTINOPLE

The main purpose of this article is to identify the main factors of revitalization of cultural life in Constantinople in the first decades of the 19th century, and in this context assess the prospects of press development as a factor of preserving identity components and preventing polarization within the community.

Here are analyzed the vision of identity preservation reflected in the periodical press, its problems and challenges. An attempt is made to identify the direction adopted by "Hayastan" newspaper published in Constantinople, in the social-political and cultural life of Western Armenians, in this case showing the role of the press as a social institution in community life.

It is noteworthy to consider the newspaper attitudes toward community life, emphasizing its impact on identity preservation, reproduction, and strengthening the cultural ties. In this case, the primary role for the community is to find the edges of comparability within the environment in the conditions of integration, avoiding the risk of final assimilation.

It is important to state that the analysis of media content enables not only to understand the development of the cultural life of the community, but also to assess the influence of the media in the community, to understand its main functions.

Салвине Акоповна Маркосян

Институт археологии и этнографии, НАН РА

РОЛЬ ГАЗЕТЫ «АЙАСТАН» В КУЛЬТУРНОЙ ЖИЗНИ АРМЯН КОНСТАНТИНОПОЛЯ

Цель данного статьи-выявить основные факторы оживления культурной жизни в Константинополе в первые десятилетия 19-го века и в этом контексте оценить перспективы развития прессы как фактора сохранения компонентов идентичности и предотвращения поляризации внутри сообщества.

Анализируется видение сохранения идентичности, проблемы и вызовы, отраженные в периодической печати. Предпринимается попытка выявить направленность издающейся в Константинополе газеты «Айастан» в общественно-политической и культурной жизни западных армян, в этом случае, демонстрируя роль прессы как социального института в общественной жизни.

Примечательно рассмотреть позицию издания по отношению к общинной жизни, акцентируя ее влияние на сохранение идентичности, воспроизводство и укрепление культурных связей. В этом случае первостепенную роль для сообщества играет поиск точек сопоставимости с данной средой в условиях интеграции, избегая риска окончательной ассимиляции.

Важно констатировать, что анализ содержания прессы позволяет не только понять развитие культурной жизни общины, но и оценить влияние прессы на сообщество, понять основные функции.

Ներկայացվել է՝ 24.02.2025,
գրախոսվել է՝ 20.06.2025,
ընդունվել է՝ 10.07.2025: